այն է, որ հայ ժողովուրդն ամուր ջղեր չունի. պէտք է միանգամ ընդմիշտ հասկանանք, որ այս պարտութիւնը հոգեբանական պարտութիւն է միայն: Եթէ վերացնենք ժողովրդի հոգեբանական այդ վիճակը, յաղթութեան մեծ դրաւական կունենանք:

Անյաջողութեան պատճառ է նաև այն, որ հայ ժողովրդի մէջ անկախ պետական կազմակերպութեան անհրաժեշտութիւնը խորապէս ըմբռնած չէ. որքան որ ցաւալի է այդ, այնուամենայնիւ, չենք կարող այստեղ չյայտարարել: Եթէ այդպէս չլինէր, այս օրը չէինք ընկնի:

Մէկ ուրիշ պատճառ էլ կայ անյաջողութեան, դա այն է, որ մենք հայ ոգով սնուած դիւանագիտութիւն չունենք, պէտք է այդ էլ ասել հրապարակով:

Ի հարկէ, թէպէտ այս պատճառները, ես չեմ ուզում ապացուցել, որ կառավարութիւնը թերութիւններ չունի: Աշխարհիս վրա ոչ մի կառավարութիւն զերծ չէ դրանից, այնուամենայնիւ, էսէրների առաջարկը ընդունելի չէ մի քանի պատճառներով: Նախ՝ ես կուզէի ըմբռնել, թէ ինչ ասել է համապետական կառավարութիւն. իմ հասկացողութեամբ դա պարլամենտական կառավարութիւնն է, այսինքն այն, ինչ որ գոյութիւն ունի ներկայումս. քանի գործում է խորհրդարանը, ոչ ոք իրաւունք չունի ոչ խորհրդարանական կառավարութիւն ստեղծելու: Ցետոյ՝ պայքարի ժամին նման առաջարկ անելը անժամանակ է, դուցէ և վտանգաւոր: Թշնամին պիտի նկատէ այդ իբր ներքին թուլութիւն և աւելի ոգևորուի, մանաւանդ որ անճնաւորութիւնների փոփոխութիւնը առանձին նշանակութիւն չպիտի ունենայ:

Ժողովրդի վերակազմութեան համար էսէրների արած առաջարկը միանգամայն ընդունելի է. կառավարութիւնը պէտք է և պարտաւոր է վճռական, խիստ միջոցներով հետապնդել յանցապարտներին, պարտականութեան կոչել ամենքին՝ տիրող թմրութիւնը վանելու և թիկունքի ուժեղ կազմակերպութիւն առաջացնելու համար: Ինչ վերաբերում է տաճիկների առաջարկած պայմաններին, կարծեմ պարզ է ամենքի համար, որ Մուստաֆա Քէմալը այդ առաջարկներով Հայաստանի ոչնչացմանն է ձգտում: Հաշտութեան պայմաններն ընդունելուց յետոյ միանգամայն աւելորդ կը լինի բանակցութիւններ սկսելը, որովհետև նախօրօք պատրաստուած առաջարկներ կանեն և 24 ժամւայ ընթացքում կը հարկադրեն մեզ ստորագրել: Մնում է երկու ելք. կամ առանց բանակցութիւն վարելու, առանց, անգամ, կարդալու ստորագրել նրանց առաջադրած պայմանների տակ, և կամ՝ կռւել:

Երբեք չեմ կարծում, որ խորհրդարանը դիմէ առաջին միջոցին. նա պիտի բացարձակօրէն մերժէ տաճիկների պայմանները ու կոչ անէ ժողովրդին հանելու իր վրայից ամօթի դրոշմը: Հասնելու դրան մենք հնարաւորութիւն ունենք, թշնամին աւելի ուժեղ չէ մեզնից. այս պայքարի մէջ մեզ հետ է եւրոպական և ռուս դեմոկրատիայի համակրանքը: Ամենքը դիտեն, որ Քէմալի նպատակն է բնաջնջել հայ ժողովուրդը, նրա նամակներն էլ հաստատում են այդ. դիտեն, որ հայը կռւում է իր գոյութեան, չասենք թէ ազատութեան, համար: Սրանք են այն դրդիչ հանգամանքները, որ պիտի սթափեցնեն մեր ժողովրդին, ամրացնեն նրա ինքնավստահութիւնը, և համոզած եմ, հեռու չէ այն ժամը, երբ հայ ժողովուրդը՝ թօթափած իր ամօթաբեր թմրութիւնը, մի կամք դարձած՝ կռւի դուրս կը գայ և ինքն իր ձեռքով կազատագրէ իրեն (ծափահարութիւն):

Բ Ա Ն Ա Զ Ե Ւ Ք

Խօսողների ձայները սպառւելուց յետոյ, Դաշնակցութեան Ֆրակցիան առաջարկում է հետևեալ բանաձևը.